

Vinzenzus Th.

M. V. M. Th.

Կեցածիկինի  
պատուին  
Ծիկիրազյան

636  
U-15

1931- Ապրիլ

24 SEP 2000

ԽՀ ԱՅ ԽՅԱԼԵՎԵՑՆԵՐԻՆ ՀՈՒՐԵՐԸ Խ-27 (118)

ԴՐԱՄՆԵՐՆ

ՀԱՅԱ. ՄԱԼԻՎՈՍԻՆ

Գ. Ա. Խ. Գ.  
ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԻՆ ՊԱՇՏՈԱՆՈՂ  
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵ

ՏԵՇ

ՆՐԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

ՂՋՈՒԿՈՄԱՏԻ ՀՐԱՄԱԿՎՈՒՅՑՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ - 1981

36


-15

№ 27 (118) ԳՅՈՒՂԵՑՆԱՏԵՍԱԿԱՆ ՀՅԱՐԵՄՑՑԵԼԻ № 27 (118)  
ԳՐԸԳԸՐԵՆ

-15  
ՀՈՎՀ. ՄԱԼԻԿԱՆՅԱՆ

Հ. Ա. Խ. Հ.  
ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԻՆ ՊԱՇՏՈԱՆՈՂ  
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՅԵՎ  
ՆՐԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

ՀՈՂԺՈՂԿՈՄԱՆԻ ՀՐԱՄԱԿՉՈՒԹՅՈՒՆ



24.3.86

21 JUN 2013

ԹԵՏՐԱՆԻ ՏԱՐԱՆ
ՊԱՅՎԵՐ 758
ԳՐԱՌԵԴԱԿՈՒՐ 6160 (Բ)
ՏԻՐԱԺ 3000

1789

46

Նախքան ՀՍԽՀ կենդանապաշտպան Ընկերության, նրա նպատակներին ու անելիքներին անցնելը, և կամ ի՞նչն ստիպեց այդ ընկերության կազմակերպելուն՝ տեսնենք, թէ ներկայումս ի՞նչ դրության մեջ և նոր հրդային հայաստանի անասունների վիճակը:

Վորպեսդի Առք. Հայաստանի կենդանիների գրությունը կատարյալ կերպով պատկերանա մեղ՝ մենք ովետք ե գնանք շրջանները, մեր յերկրի խորքերը, վորոտեղ ժողովուրդն իր վար ու ցանքն և անում, իր հայն ու խոտը կըում, կալուում-հավաքում, սարերում ու ձորերում զտնված անտառներից փայտ և գուրս քաշում, զետերի ու գետակների ափերից վորձաքար և կրում, ջարափներից բազայլո ու տուֆ և բերում, յերկաթուղու, կամ մեծ հիմնարկությունների պահեստներից չինանյութեր— փայտ, յերկաթ, ալաղ, կիր, գաղ և տանում... պետք ե մտնենք դոմերը-ախորհները և տիսնենք կենդանիներին վատ կերակրելը, սակավ ջուր ուսուլը, նրանց տակի ու մաշմանի անօմաքրությունն՝ և ազագաղափար կազմենք, թէ ինչ ոսկեկալի վիճակի մեջ են մեր յերկրի անասուններն իրենց տաքցան աջքաւունքի և առաջանելքի մեջամբ քիչ տեսակներից:

Գյուղացին կամ բեռնակրությամբ պարապող քաղաքացին, վորպեսզի իր ծախքերն արդարացնե և իրեն ել վորքան կարելի յե շատ ոգուտ մնա՝ բեռնում ու բառնում և լծկան-դրաստ անասուններին նրանց ուժից կրկնակի ավելի: Կենդանին տանջվում ե, չի կարողանում իր ուժին անհամապատասխան ծանրությունը քաշել-կրել, մանավանդ վերելքներին ու անհարթ, քարքարուոտ տեղերում, հաճախ և առուներ անցնելիս այս-տեղ առաջ և դալիս վոչ թե հասարակ ծեծ, այլ գանահարություն, և յերբեմն դա հասնում է այն աստիճանի բարբարոսության, վոր քարով տալիս են կենդանու դանդին և կենդանին ուշագնաց վայր և ընկնում: Բի-րով կամ հաստ փայտով սաստիկ ծեծելուց նրա կողերի վոսկրները ջարդվում են, ինչպես այդ ապացուցել են կենդանաբանները. կաշն ծածկվում և տասնյակ վերջնորով: Այդպիսի գանահարության հետևանքով կենդանին ջղայնանում ե, նիհարում (մանավանդ վոր կանոնավոր սնունդ չի ստանում) և կենսունակությունը ժամանակից առաջ կորցնում, հաճախ հաշմանդամ՝ աշխատանքի անպետք դառնում: Այսպիսով յեղը, ձին, եղը, գոմեշը, չորին փոխանակ (միջին թվով) 15 տարի աշխատելու, աշխատում են 6-8 տարի, վոչ ավելի. այն ե՝ սահմանվածից պակաս 50—60 տոկոս, ինչպես այդ ապացուցում են մասնագետները: Դրա հետևանքով ել չի շատանում մեր յերկրի անասունների թիվը, վորի պատճառով ել տուժում ե մեր փոխադրության գործը: Իսկ մի յերկիր, ինչպիսին մերն ե, սարեր, ձորեր, գտնիվայրեր ու զառիվերեր, ժայռեր, անհարթ ու դյուղական նահապետական ճանապարհներ, լեռնոտ տեղերում անտառներ, մացառներ, վորտեղ չկան յերկաթուղարին գծեր կամ խճուղիների մեծ ցանց, մեծ

կարիք ունի անասունների իր շինարարական գործում, վորպիսի շինարարությունն այսոր որստորե հսկայական քայլերով առաջ ե գնում:

Բավական չե, վոր այդպես անփույթ ու անողորմ են վարվում առողջ կենդանիների հետ, այդպես ել վարվում են հիվանդ, կաղ, կույր և վերք ունեցող անասունների հետ: Կենդանին ցավից ու կոկիծից չի կարողանում շարժվել, այստեղ զալիս և հարվածը (համեմած հայհոյանքով) նրա մեջքին, փորին, դմիսին. կենդանին կես կյանքը կորցնելով կրում ե իր բեռը, կամ ավելի ճիշտ ասած՝ տանջանքը, մինչև վոր տեղ և հասցնում: Այս պայմաններում հիվանդ, կաղ, կույր և վերք ունեցող կենդանիները, ինչպես ասացինք, կամ հաշմանդամ են դառնում, կամ սատակում:

Ծեծում են հաստ ճիպոտով, մահակով, յերկաթե ծողով, փայտի կտորով, անդամ կացնով, ինչ վոր ծեռքերն ե ընկնում, բացի այդ, նրանց մարմինը, մանավանդ ենիրի, ծակում են սուր բանով, բիզով, մախաթով: Բաղմաթիվ որինակներ կան ծեծի ու տանջանքի բերենք միքանիսը.—

ա) Մի քանաքեռցի յերիտասարդ, իր ձեռի հաստ փայտի սուր ծայրը կոխում եր իր նստած եշի վզի մեծ վերքի մեջ, վորպեսզի կենդանին ցավից յերթն արագացնի. փայտի կեսն արյան ու շարաֆի մեջ եր կորած: բ) Մի ավանցի պատանի վզերը կածուրիկ (չիբան) վերքերով իր յեզներին բերել եր Յերեան, քար եր կրում. յեզները ցավից չեյին կարողանում քաշել, իսկ սա մի գլուխ ծեծում եր, վոր սայլը քաշեն: գ) Մի քյավառցի գյուղացի կաղ եշին բարձել եր 6-7 փութ բեռ և տանում եր Ն. Բայազեդ. յերբ բեռը վայր առանք՝ եշը չեր կարողանում վոտը գետին դնել, իսկ յերբ փալանը

Հայր առանք՝ Եշի մեջը մի յեր վերքերով : գ) Յերեանի  
իշխաններից մեկում գտանք Քյալվառից յեկած 25 եշ,  
վորոնցից միայն յերեքի վրա վերք չկար , մնացածների  
բոլորի մեջքերին ու աղղոքերի վրա վերքեր կային , այն  
ել նեխած , վորդնած վերքեր . յրանց շատերի վրա , իբ-  
րև դեղ , հող եյին ցանել : (Այստեղ հիշենք , վոր այդ  
վերքերի շարաֆն անց ե կենում փալանին . մթերքների  
ամանների բերանները ծածկած կտորներն անփույթ  
կերպով գցում են այդ փալաններին , ապա ծածկում ա-  
մանների բերանները , այսպիսով վարակում տարա-  
ծում ժողովրդի մեջ) : Պետապի տված թվերից յերե-  
քում ե , վոր ամենից շատ տոկոսով են են սատակում ,  
ե սա հետեանք ե , ըստ մեծի մասին , այդ տեսակ վեր-  
քերի : յե) Մեկ իշխանդի , իր յեղան կրթելու համար ,  
(անտառից փայտ կրելիս) կացնի սուր ծայրով տալիս  
ե նրա դունչը կտրում . յերբ հարցնում են , թե ի՞նչ հս  
անում . պատասխանում ե՝ մինչեւ աւաղես հանես , չի  
կրթվի : զ) Մեկ տաշկաչի մի կմախք դարձած կույր  
ծիռ , վորի մեջքն ու վիղը վերքերով լիքն եյին , ահա-  
դին բեռը բարձած ծեծում եր , վոր կենդանին չի կա-  
րողանում քաշել : ե) Մեկ խաչբառակի գյուղացի այն-  
քան եր թակել իր մի յեղան , (և պատմում են , վոր շա-  
րունակ , ամեն որ թակելիս ե յեղել) վոր կենդանու մա-  
զերն իսպառ պոկիլել եյին և նրա վողջ մարմինը ծածկ-  
վել եր քոսով : ը) Մեկ տանտիկին կատվի ձաղերին  
գուրս ե շպրտել տան յերրորդ հարկի լուսամուտից փո-  
ղոց , ջախջախել և այլն , և այլն :

Թե կենդանիների այդ վերքերը վորքան վնասա-  
կար են նրանց համար , վերցնենք անասնաբուժության  
մեջ պրկախտ կոչված հայտնի հիվանդությունը : Գի-  
տությանը հայտաբերել ե , վոր քետանի մեջ կան մի առ-

առկ բացիլներ , վորոնք վերքի միջով մտնում են անսա-  
սումի մարմնի մեջ , խորը զնում , բաղմանում , այնտեղ  
ել իրանցից մի տեսակ թույն արձակում , վորով կեն-  
դանուն անշարժ են դարձնում — սպանում : Սա անբու-  
ժելի մի հիվանդություն ե . այդ հիվանդությունից  
սատակում և անասունների 90-100 տոկոս :

Իսկ վո՞րքան վիրավոր , վերքուտ անասուններ կան  
մեր յերկրում ...

Լծում կամ բեռնում են կենդանուն դեռ իր հասակը  
չառած , դեռ նրա վոսկրներն ու մկանունքները չզար-  
գացած-չամրացած . Լծում են յերկու տարեկան քուռա-  
կին , արջապին (մողուն) . բեռնում են մեկ տարին հա-  
զիվ լրացած եշին : Այսպիսի հանգամանքների չնորհիվ  
կենդանին , կենդանու հետ ել նրա ցեղը , չեն զարդա-  
նում , չեն աճում , մնում են փոքր , գաճաճ : Այդ տեսակ  
կենդանին իր կյանքի կեսը հաղիվ ե ապրում , ապրած  
ժամանակն ել հաղիվ ե կարողանում իր աշխատունա-  
կության 50 տոկոսը կատարել :

Այստեղ բերենք կենդանիների կյանքի տեսողության  
աղյուսակը և տեսնենք , թե նա իր կյանքի տարիների  
քանի՞ տոկոսն ե ապրում ու աշխատում : (Տես ալու-  
սակը 8 եջում) :

Աշխատեցնում են եգ եշին , ուղտին , ձիուն , գոմե-  
շին մինչև նրա ծնելու որը և ծնելուց հետո յել անմի-  
ջապես : Վաղպատեցի մի կառապան 2—3 ժամ առաջ  
ծնած մաղյանին (զամբիկ) , իր նոր ծնած քուռակի հեա  
ման եր ածում փողոցում : Յերբ հարցըրի՝ ի՞նչ ես ա-  
նում , պատասխանեց , — «Ճան եմ ածում , վոր քուռակը  
մի լավ չորանա , լծեմ զնամ Յերեան» : Այսպիսի յերե-  
կությունների , այն ե՝ զդի անասուններին մինչև ծնելը և

Ննելուց հետո անմիջապես աշխատեցնելու հետեանքն  
այն ելինում, վոր տարեկան հազարավոր անասուններ  
վիժում են և կամ նրանց ձագերը մա սղ հասակում

ԿԵՆԴԱՆՈՒ ԱՆՌԱՆԸ	ԿԵՎԱՆՔԻ ՄԱՆԿՈՒԹ. ԹՅԱՆԸ	ՄԱՆԼՈՒԹ. Ա ՃԵՐՈՒ- ԹՅԱՆԸ	ՔԱՆԻ ԱՆՎԱՀԱՄԱՆՆԵՐ	ԲԱՆԻ ԹՅԱՆԸ	ՔԱՆԻ ԱՆՎԱՀԱՄԱՆՆԵՐ
1. ՌԵՂՊԸ	50-60	5+15=20	20	40 ա.	10-20=15
2. ԳԱՋԻՉԸ	30-35	4+10=14	10	24 ա.	6 9=8
3. ԵՋԸ	25 30	3+7=10	8	18 ա.	7-12=9
4. ԶԻՒՆԸ	30-35	3+8=11	10	21 ա.	9-14=12
5. ԶԱՐԻՆԸ	30-35	3+8=11	10	21 ա.	9-14=12
6. ՑԵՂԸ	25-30	3+7=10	8	18 ա.	7-12=9
7. ՎՈՂԱՄԱՐԸ	15-20	-	-	-	-
8. ԽԵՂԸ	20 և ա- վելի	-	-	-	-
9. ՇՈՒՆԸ	15-20	-	-	-	-
10. ԿԱՏԱՆԸ	15-	-	-	-	-
11. ՀԱՎԸ	4-5	-	-	-	-
12. ՍԱՋԸ	-	-	-	-	-
13. ԲԱՂԸ	-	-	-	-	-
14. ՀԱԳԿԱԽԱՎԸ	-	-	-	-	-

սատակում են: Այս մեր տնտեսության հիմքի քայլքա-  
յումն ե:

Իսկ կենդանիներին իրար հետ կռվացնելը, նր-  
անց ի զուր տեղը հալածելը, հաճույքի համար նրանց  
տա չելք, պարսետով (ռոդատկա) սպանելը, թոչուն-  
ների բներ քանդելը, սրանք այնպիսի սովորական յե-

րեռութ են դարձել այսոր, վոր մեր աչքի տուած ամբու-  
որ կը կնպաւում են: Յեղել են գեղաքեր, յերբ յերկու խոյ  
իրար հետ կռվացրնել են, նրանց իրար վրա խիստ ուժեղ  
հարձակում դրծելուց՝ մեկի գանգը վշրվել է: Հապա-  
չներին իրարու վրա քսաքըս տալը: Այս բոլորն այնպի-  
սի աննպատակ և անողորմ վարմունքներ են, վոր  
անուն չունեն, թե կենդանիներին փչացնելու և թե մա-  
նուկ սերնդին գաստիարակելու տեսակետից:

Մեր գյուղացիք, համարյա, ձգտում չունին իրենց  
անասունների ցեղն ազնվացնելու, նրանց վորակը բարձ-  
րացնելու, վոր նրանցից ավելի լավ ոգավեն: Յեթե  
ման գանք ըրջանները, կտեսնենք, վոր շատ տեղեր  
նախրի մեջ բեղմնավորելու համար թողնում են ամենա-  
մուշը մողիներին. (վոչ վոք չի ուզում իր խոչոր, արու  
հորթը, կամ յերկու տարեկան մողին զոհել նախրի հա-  
մար, բուղացու թողնել) իսկ իլիսիների մեջ յերբեք ցե-  
ղական, կամ վորեւ լավ տեսակի խոչոր և ուժեղ ձի-  
չեք գտնի: Զամբիկները բեղմնավորվում են 2 տարե-  
կան հասարակ քուռակներից, վորոնք գեռմս արածում  
են իլիսու մեջ: Սրանով չի խոչըրանուած-ազնվանում  
ցեղը. յեթե սրա վրա ավելացնենք կենդանիների կրած  
անձայր տանջանքն ու սննդի պակասությունն ընդհան-  
րապես, կտեսնենք այն տիպուր պատկերը, վոր այսոր  
ունեն մեր յերկրի անասունները, նրանք մանրացել, զա-  
ճաճացել են, այսպիս ասած՝ մի-մի կատու յեն դար-  
ձել:

Իսկ յեթե այս բոլորի վրա ավելացնենք ժողովրդի  
անփութ վերաբերմունքը՝ կենդանիների ցեղերն իրա-  
րու հետ խառնվելու գործում, կտեսնենք, վոր այսոր  
մեր յերկրում վոչ մի տեղ (շատ քիչ բացառությամբ)

ժաքուր ցնդ չի մնացել . բոլորն ել իրար հնա թառնվել ,  
մի տեսակ շիլա - փլավ են դարձել . հենց մեր հովական  
շները , Ղարաբաղի նժույգները , Զավախքի հայտնի  
ձիերը և այլն , և այլն :

Հայաստանում տարեկան հաղարավոր շներ են կո-  
տորվում . նրանք իսպանուրդից առաջ յեկած փողոցա-  
յին կոչված թափառական շներն են :

Այդ կոտորվող շների ամբողջ հանցանքն ընկնում է  
նրանց տերերի վրա , վորոնք չեն հետևում իրենց ցեղա-  
կան շների աճման զործին . յերբ նրանց հեշտանքի ժա-  
մանակն ել լինում , կամ ինչպես ժողովուրդն եւ ասում՝  
քոնթի գալը՝ չեն վերցնում նման ցեղի շուն , միքանի  
որ չեն պահում տանը , մինչև վոր բեղմնավորման որե-  
րը անցնեն . նա եղ շունը թողնում եւ փողոց և շունը  
խառը կերպով հարաբերություն եւ ունենում պատահած  
շան հետ՝ շպիցը գամբուի , քոթոթը՝ սետտերի , պոն-  
տերը՝ մոպսի , գամբուլ՝ բարակի և այլն , վորի հետե-  
վանքով մի կողմից վորքան նվազում եւ ազնվացել շնե-  
րի սերունդը , մյուս կողմից այնքան շատանում են վո-  
ղոցային (թափառական) շները և զրանով ստացվում ե  
թափառական շների մի ահագին վոհմակ , վորոնց մեջ  
ցեղական վորոշ հատկությունները կորսվում են և ա-  
ռաջած ե դալիս ինչ վոր խառն մի բան , ասլա կոտորածի  
բաժին դառնում : Սա մի տղեղ յերեւյթ ե , վոր կա-  
տարվում ե մեր մատաղ սերնդի աչքի առաջ և ազդում ե  
նրա հոգեկան դաստիարակության վրա . (բացի այդ ,  
թափառական շները հաճախ կատաղում են և կծում  
մյուս շներին ու մարդկանց և բաղմաթիվ զոհերի պատ-  
ճառ դառնում ) :

Շների վատ պահելու վերաբերմամբ մեր ժողովրդի  
վարմունքը համառում է կատարյալ անփութության .—

աերը շանը չի կերակրում բավարար կերպով . Նա թա-  
փառում ե փողոցները , վոր կեր կամ վոսկը դտնի :  
Նրա համար բուն (տնակ) չեն շնում , վոր կենդանին  
ցրտից ու շոգից պաշտպանվի , նրա կողքին ջուր չեն  
դնում , վոր ծարավը հաղեցնի : Նա իր ծարավը կոտրե-  
լու համար , հաճախ , խոնավ և նեխված բան ե լիզում :

Դեռ ավելի սոսկալին կա . այգետերերը , յերբ վը-  
րա յև հասնում ձմեռը և իրենք դալիս են տուն , իրենց  
շներին վոնդում են այդիներից և տուն դալուն չեն  
թողնում . այդ 8 ամիս ծառայություն մատուցող շները  
մնում են դուրսը , վողոցում . Նրանց կծում կամ ու-  
տում են գայլերը : Ապաստարան գտնելու համար այդ  
շները գալիս են քաղաք , նրանք դուրսը մնալով կատա-  
գում են կատաղած գայլերից կամ ուրիշ թափառական  
կատաղած շներից , և իրենց հերթին կծում են մարդ-  
կանց , յերեխաներին : Այգետերերի այդ արարքը մի  
բարբարոս վարմունք ե , մի սև չնորհակալություն 8 ա-  
միս իր բարիքը պաշտպանած շան դեմ :

Նույն վերաբերմունքն ունեն և կատուների վերա-  
բերմամբ : Զեն տալիս կանոնավոր սնունդ , վորի պատ-  
ճառով նա իր գող հատկությունը ավելի յե շատացնում  
ու անվերջ տանջվում կամ սպանվում (թոկով խեղուամ  
են) : Այդ գրությունն ավելի ուշյեֆ կերպով աչքի յէ  
ընկնում , յերբ նրանք ձագ են բերում : Տերերը , փոխա-  
նակ այդ ձագերին , նրանց ծնված բոպեյին , յեթե չեն  
ուղղում կամ չեն կարող ապագայում պահել կամ բա-  
ժանել հարեւաներին , ջուրը դցելու իւեղելու , պա-  
հում են մի քանի որ և ապա դուրս շպրտում փողոց ...  
Յեկ դուք փողոցով անցնելիս կլսեք , քարերի արանքից ,  
պատերի տակից նրանց անվերջ վնդան ու մլավելը , մին-  
չե վոր սովամահ են լինում և կամ մեր յերեխաների  
ձեռքով սպանվում ...

Այս կարգի հանցավորների շարքին պետք է դառնել

և այն անձերին, վորոնք դիտմամբ, թշնամության պատճառով, վնասում են ուրիշների կենդանիներին: Այդ տեսակ դեպքերը մեր իրականության և գրականության մեջ շատ են.— ա) Մեկ հարեւանի եշ մտնում ե մյուս հարեւանի այդին. վերջինիս տերը, բահի սուրբեանով խփում, վիրավորում ե եջի ականջի յետեր, աչքի վերեր և կարում լեզուն, այնպես, վոր անասունը չեր կարողանում վոչ ուտել, վոչ խմել: բ) Յերկու հարեւանի այդիների արանքում արածում ե նրանցից մեկի ձին: Թշնամի հարեւանը Փին դանակով կտրում և ձիու աջ թմբը մոտ 40 սանտ. յերկ. և 5 սանտ. լայնությամբ վերը բաց անում: գ) Ղաղախում, թշնամության պատճառով, իրարու գոմել են զցում ժայռից ներքեւ, ջախախում: դ) Ղաղախը ում թշնամական հողի վրա հարեւանի անասունը դաշտում մորթում են, կաշին հանում, տանում ծախում, լեզր թողնում հանդում:

Մեզանում կենդանիներին պահելն ու հոգալը վերին աստիճանի անխնամ վիճակի մեջ և գտնվում: Նախ տեսնենք, թե ի՞նչ դրության մեջ են մեր գործերը. — անձունի կերպով քարահատակած և կենդանու տակը չմաքրած հատակ. կենդանին կանգնած ե այդ կեղտի վրա. նա մի գիշերատիվի մեջ մինչև 15 ժամ կանգնում ե կամ պառկում և այդ կուի մեջ. միքանի ժամ հաղիվ և լինում նրա տակը մաքուր կամ չորացած. նրա մարմնի գրեթե կեսը կեղտոտվում ե. այդ կեղտը կպչում և նրա աղդրերին, փորի տակը, մինչև կուրծքը. այնուհետու այնպես ասած, պասմա յե բռնում. պոչըն անդամ ամբողջովին ծածկվում և կեղտով. այդ պասման մնում ե մինչեվ գարուն, մինչեվ վոր կենդանին մաղը փոխում ե, մազի հետ հեռացնում ե իր վրայից այդ շերտերով կեղտը: Կենդանու մարմնը վոչ մի անդամ չեն ըրբում, չեն լվանում. ոդի մեջ յեղած փոշին շարունակ նստում

և նրա մարմնի վրա և ծածկում կաշու ամբողջ ծակուտիները. կենդանին կաշու միջով չի կարողանում ըլնչել— ոդ ստանալ. իսկ հայտնի յե, վոր շնչառության գրեթե 50 տոկոսը կասարվում ե կաշվի միջով. նրա մարմինը քոր և դալիս, նա առիթ և փնտում վոր մի սյունի, կամ մի պատի պատահի, մարմինը նրան քսիքորի: Այդ գոմերի ոդը խողդող ե. ունեն վերեկց (կտուրից) միայն մի փոքրիկ յերդիկ, 30X40 սմտ. մեծությամբ, վորի միջով միայն յերեկներն ե ուի փոփոխություն լինում, իսկ ձմռան յերկար զիշերներին 12—14 ժամ փակ ե և կենդանին չնչում ե իր արտաթորությունից ու շնչառությունից առաջացած գաղերն ու գոլորշին: Այդ գոմերն այնքան խավար են, այնքան մութը, վոր կենդանին իր առջեկի մսուրն անդամ չի կարողանում նկատել: Կենդանին բառի իսկական իմաստով, գուրկ ե լույսից ու արեկի ճառագայթներից: Դրանով վնասվում ե նրա տեսողությունը, վստանում ե նրա առողջությունը, փչանում ե նրա սրամալիքությունը. և դա տեսում է ամիսներ, 5—6 ձմբան յերկար ամիսներ:

Եեթե յերկու փոխարեն գոմն ունենար պատերի մեջ, մսուրից քիչ բարձր, լուսամուտներ, վորտեղ ձմեռը ապակի յե դրվում, ամառը հանվում, ինչպես որինակելի ֆերմաներում, այն ժամանակ և ոդ կլիներ, և լրւյս, և արել, և չեր տիրի այդ խավարի թագավորությունը:

Կենդանուն լողացնելու մասին մեր ժողովուրդը գաղափար անդամ չունի, այն ել վոչ միայն ձմեռը, այլև ամառը, յերբ յեղանակը տաք ե և ամեն տեղ գետ ու առու կա, աղբյուր ու վտակ: Նրանց ծիծաղելի յե թը վում իր եշին, շանը, կովին, յեղանը կամ ձիուն ու զո-

բուն լողացնելը : Խնչպէ՞ս թէ եշը լողացնեմ . վա՛հ , աւ-  
մոթ չե . եշն ի՞նչ ե , վոր լողանա . (այն եշը , վօր այսոր  
նրա կյանքում ամենապիտանի , ամենադիմացկուն և  
ամենահամբերատար անասունն ե) :

Նա միայն 1—2 անգամ , այն ել ձմբանը , լողաց-  
նում և գոմենիներին ու մատակներին , վորոնց մարմինը  
ձիթում ե , վորովհետև նրանց կաշին չորանալուց ճաք-  
ճռում ե . իսկ վորձ ձիուն միայն թիմար են անում (շլ-  
փում) , այն ել յերկաթիւ զաշավով , վորխանակ խողա-  
նակի , վորպիսի հոգացողությունից զամբիկներն ու  
նրանց քուռակները , զուրկ են իրենց ամբողջ կյանքում :  
Գալուվ աննդին , պետք ե ասել , վոր կենդանին , մեղա-  
նում , իր պարենի հաղիս կեսը կամ յերկու յերրորդն ե  
ստանում : Նրա կերածն ել , մեծ մասսմբ դարման և  
(մանավանդ զամբիկների , կովերի , եշերի ու զրանց  
զեռաւաս զավակների կերածը) , դարման , վորի մեջ  
դրեթե վոչ մի սնունդ չկա . այդ դարմանը շատ անգամ  
կենդանու ստամոքսի մեջ քացախում ե և փորահարինք  
և առաջ բերում :

Մեր ժողովուրդը (բացի ոռւս տարրից) ձմռանը  
կենդանիներին վորոշ ժամանակով զուրս չի թողնում ,  
վոր նա արև ու լույս տեսնի , ող չնչի : Նա գոմենիներին  
չըրում և զամի մեջ , իսկ մյուս կենդանիներին դուանը ,  
իր (ասկառով) բերած ջրով , կամ զետի ափին (յեթե  
կա) , և կամ հորերից քաշած ջրերով : Կենդանին ջրի  
յել պակասություն ե կրում : Այդ պակասությունն  
այնքան յերկրի գիրքից չե , վորքան տիրոջ անփութու-  
թյունից , անհասկացողությունից , մինչև անգամ ամ-  
րանը : Նա սոլոր և ջրել իր կենդանուն որական միայն  
յերու անգամ , առավոտյան և յերեկոյան :

Վատ և նաև վոչխարի գրությունը . Նրա տակը

յերբեք չեն մաքրում . նա իր կտորին իր մեզի հետ  
խառը կոխոտում ե , իր տակը տափակացնում , պասմա-  
դարձնում , վորի վրա նա ապրում և ամիսներ : Վոչխա-  
րագոմը մտնել չի լինի . այրող , սուր դաղերն իսկույն  
ձեր աչքերն առնում են : Գարնանն այդ կիտված-պըն-  
դացած կեղտը , մեկ ու կեսից մինչև յերկու վերշոկ հա-  
տությամբ , կտրում-հանում են իրեկ աթար , վորին ժո-  
ղովուրդը տարթ և ասում : Այդ վոչխարագոմերը նույն-  
պես մութն են , ողից ու արեկից զորեկ . ունեն մի նեղ-  
միկ յերդիկ , վոր նույնպես գիշերները փակում են :

Այդ գաղերի շնորհիվ գառնոցում (գառնոց կոչ-  
վում և վոչխարանոցի այն անկյունը , վոր կտրված և  
լինում տախտակով , կամ աթարով , թողած միայն մի  
զոնակ դառներին դուրս ու ներս անելու համար) յե-  
ղած գառները , ըստ մեծի մասի , տառապում են աչքա-  
ցավով և այլ հիվանդություններով , վորպիսի ցալից  
նրանց մի մասը հազիվ ե ազատվում , յերբ դարնանը  
դուրս են դնում արոտ , ազատ ող շնչում , արև տեսնում :

Այդպիսի ծանր , հակասողապահական պայման-  
ներում , ի հարկե , թե խոչը և թե մանր անասունները  
չեն կարող մարմնով ամելդարպանալ :

Եթե մի կողմից Հայաստանի կառավարությունը  
100 հազարներ ծախսելով աշխատում և մեր յերկրի ըն-  
տանի կենդանիների և թուշունների թիվը շտացնել ,  
ցեղն աղնվացնել , խոշարացնել , ափելի արդյունավետ  
պարձնել , մյուս կողմից գյուղն ու քաղաքի անառնա-  
պահները , կարծես , դրա հակառակն են պնում :

Մեր ժողովուրդը բավականին ծանոթ և անասուննե-  
րի հիվանդություններին , ինչպես և ժամատախտը , դա-  
րագը , խչխումը , յամանը , ջաղցավերը և այլն , և նը-  
րանց ստացած վերքերին , վորոնց գեմ նո գործ և ա-

Ճում նահապետական, թերես և վնասակար միջոցներ, առանց անմիջական կերպով տանելու անասնաբուժի մոտ, կամ անասնաբույժ հրավիրելու — դրա հետեւ վանքն այն ե լինում, վոր վարակիչ հիվանդությունները տարածվում-ծավալվում են, ահազին կոտորած առաջ բերում։ բացի կոտորածից, խանգարվում է ինտենսիվ աշխատանքը և կաթնատնտեսությունը։

Առաջ բերենք այստեղ Հայպետապի թվերը և տես-

Տարեթիվ անսառներն. Բիշով	Բուրր անսառներն. Բիշով	Բուրր անսառներն. Բիշով	(մաս) տպալով	Բուրր անսառներն. Բիշով	Բուրր անսառներն. Բիշով	Բուրր անսառներն. Բիշով	Բուրր անսառներն. Բիշով	Բուրր անսառներն. Բիշով
1926/27	609,888	25725	7203	8881	10154	2207	49	54219
1927/28	664,287	4316	5748	13605	6954	5748	189	36560
1928/29	739,876	2586	1744	8715	21831	8760	409	44045
Բուրր	2,014,051	52,627	14695	31201	38939	16715	647	134824 7 <sup>9/4</sup> %

նենք, թե վերջին յերեք տարում՝ 26—27, 27—28, 28—29 վորքան խոչը անասուն (յիզ, կով, ձի, ջորի, եղ, գոմեց, ուղար) և կոտորվել և բանչ Հիվանդությունց կամ պատճառից, այն ել մեկ ու կեսից ավելի տարիք ունեցողները։ (Տես յեր. 16)։

Այդ 134.824 գլուխ խոչը անասունների մեջ չկան բնագետ 1—1½ տար. հորթերն ու քառակինները, այսպես ել չկան վոչխարներն ու այծերը, խոզերն ու թըռչունները։ յեթե զբա գրա ամելացնենք Պետակի տված թվերով տարեկուն 15 հազար դլուխ աստակած հորթ ու քառակ՝ խոչը, սատակած, տեսառնենների թիվը 3 տարում կրաքանա մոտ 180 հազար, իսկ յեթե զբա գրա ամելացնենք և ոստակած վոչխարների ու այծերի, խորդերի ու թոշունների քանակը կանոնները, վոր այդ կորուսանները ինչպիսի սարսափելի չափերի համար։

180 հազար զբուխ խոչը անասունները հաշվեալ, 200-ական ոուրիշ = 36 միլիոն։ Մոտ 4 միլիոն ել մանր մեղուրամասը անասուններն և թոշունները, ընդամենը 3 տարում կլինի 40 միլիոն, տարենը 13 միլիոնից տվելի։ Սա անհասութան քայլայումն է, վոր այսոր կատարվում է մեր աշքի տառջ, և վորի զեմ պետք է պայքար մղել կատաղի կերպով։

Այդ կազմից մեր յերկրին մասսմբ ողնության հասնող Հայպետապն ե, վոր իր ապահովագրումով թեթեացում և տնտեսապես կորուսու ունեցող անասունապահի զինակիր, զնուրելով յուրաքանչյուր մեկ յիշուն միջին հաշվով։

մեկ կումբ միջին հաշվով 30 ոուրիշ

մեկ զումեցին » » 47 »

մեկ մասնակին » » 37 »

մեկ բարեկամ » » 43 »



մեկ ջորուն միջիվ հաշվով	43	սուբթի
մեկ հշին	»	18
մեկ ուղարին	»	47
Հայպետապր վճարել և միմիայն խոչոր անասուն-ների համար՝		
m) 1926—27 թվի համար	1.147.544	ո. 32 կ.
p) 1927—28 թվի համար	923.559	ո. 20 կ.
q) 1928—29 թվի համար	1.146.859	ո. 02 կ.
Ընդամենը	3.217.962	ո. 54 կ.

Իսկ մենք տեսանք, վոր 1926—27, 27—28 և 28—29 թվականները տարում ստանէլ և խոչոր անասուն (վո-րոնց մեջ հաշված չեն մինչև մեկ և կես տարեկան հորթու քառորդ) մոտ 135.000 գլուխ, վոր յեթե զնահատենք միջին հաշվով 300 ո., կատանանք 40.500.000 սուբթի, վորի հանդեպ ստացվել միմիայն 3.218.000 սուբթի, այս եւ 37.282.000 ո. պահանձ կամ տարենը 12.300.000 ո. գրեթե նույն գումարը (միջին թվով հաշված), ինչ վերում բերածը:

- Այժմ նաքենք մեր յերկրի կենդանիների սրարտա-դիր ապահովագրման գործը և Հայպետապրի ապահո-վագրությունների ու գործակալությունների ցանցը:
- Վարչություն, Յերեանուու.
  - Յերեանի ըրջան (քաղ.).
  - Իջևանի ըրջան.
  - Շամշադնի ըրջան— Բերդ.
  - Վեդիի ըրջան.
  - Մեղրու ըրջան
  - Թալինի ըրջան.
  - Աղքարայի ըրջան— Ամասիա.
  - Աշտարակի ըրջան.
  - Գորբությունների ըրջան.

- Դիլիջանի ըրջան.
- Կոտայքի ըրջան— Գանձարա.
- Ղուրզուլու ըրջան.
- Մարտունու ըրջան.
- Մոլա-Գրիգորյի ըրջան.
- Նոր Բայրակեդի ըրջան.
- Սիսիանի ըրջան— Դարաքիլիսար
- Ղափանի ըրջան.
- Արարանի ըրջան— Բաշարաբարձ.
- Ալահանի ըրջան.
- Ավանին Սամանի ներքին Ախուսա.
- Ախուսայի ըրջան— Ներքին Ախուսա
- Բասար Գեչարի ըրջան
- Վաղարշապատի ըրջան.
- Դարալազյանի ըրջան— Քեշիշենար.
- Ղամարլույի ըրջան.
- Ղարաքիլիսայի ըրջան.
- Մտեփանավանի ըրջան.
- Դուղդբանուի ըրջան.
- Լենինականի ըրջան— (քաղ.)

(Տես աղյուսակ 20-րդ յերես):

Իսկ կամավոր կերպով (բարձր արժեքով) ապահո-վագրիած են 1927—28 և 1928—29 թվականների Հայպետապր, վորոնք մտնում են և մյուս ապահո-վագրության մեջ:

Տարի- ներ	Տ արագ շարժ	Հ արագ	Խ արագ շարժ	Մ արագ շարժ	Ո ւրագ	Վ արագ շարժ	Հ արագ	Բոլո- ր
1927/28	866	602	21143	—	107	—	—	22718
1928/29	1329	236	18767	—	22	31588	36	51978
Բոլորը..	2195	838	39920	—	129	31588	36 *)	74696

Կա աճում և կա նվազում:

1927/28 թվին հաջողական աճել և 90%

1928/29 » » 1927/28 » 120%

1929/30 » » 1928/29 նվազել և կես 0%

Հայպետագն, ինչպես կտեսնեք վերեր բերված աղուսափեց, գրեթե, ամեն տեղ իր լիազորներն ունի, իր ներկայացու հիմները, վորոնք ամեն կերպ աշխատում են՝ ամոզել ծով գրդին իր կենդա ինները ապահովելու գժբախտ գեղփերից, սակայն ցափն այս է, վոր մեր գուղղացին շատ քէ և իրազու ծում ալլ և յեթե չիններ պարտադիր պահանվագրումը, շատ քչերը կամագոր կերպով կապահանվագրելին, ինչպես ցուց տվին վերոհիջալ թվերը:

Այս պահանումները հանգամանքի վրա յեթե ավելացնենք մեր յերկրի անասնաբույժներ ու բուժակներ, հիվանդանոցներ ու ամբողջառիաներ սակայն ունենալը, կտեսնենք, թե վորպիսի տիսուր իրականության առաջ ենք կանգնած:

Ամբողջ Հայաստանը տակալին մի որինուկելի անս. հիվանդանոց չունի. Յերեկանը, Լենինականը գեռ ևս կառուցելու յեն, ինչպես Ղարաքիլիսան, Սևանը, Իջևանը և մյուս տեղերը. իսկ այժմ յեղած ամբողջառիաներն իրենց հետ չունեն վոչ զոմ, վոչ անջրպետման տեղ, վոչ ծածկույթ: Անասնաբույժները կենդանիներին ընդունում են՝ ձմեռը ձյունի ու սառնամանիքի մեջ, ամառը—արևի ու անձրեսի տակ: Սա մի աղաղակող բաց է, վոր Հայաստանի կառավարությունը լրացնելու յե այս հնդամյակում:

Կենդանիների լծասարքն ու կառասարքը, դրանց հետ ել փալաններն այնպիսի նահապետական դրության մեջ են, վոր մեծ դժվարություն են պատճառում կենդանուն աշխատելու ժամանակ. այդ լծասարքերն անհարմար են, ծանր և ցավ պատճառող, մանավանդ յնդյուրապոր անասունների լծերը. իսկ չորս

29 Հրան կամ դործակալություն, վարուել պարտակեր կիրակու աղահովությամբ են.

S m r /r	Գյուղականակար	Բնուած	Ե	Պ	Փոքրահանասուն	Ե	Վ	Չ	Ց	Ց	Աղահովությամբ	Բուրգը
1926-27	Գյուղ	199	22217	18627	94767	211459	209855	13996	21097	609888		
	բարեգոր	-	827	1140	1894	8726	4244	220	520			
1927-28	Բուրգը	199	23044	18767	96761	220185	214099	14216	21617			
	Պ.	296	26565	23247	97220	238675	226794	13969	21334	664287		
1928-29	Պ.	1	1050	1457	2819	8656	391	204	499			
	Բուրգը	297	27615	24704	99539	246341	230785	14173	21883			
	Պ.	452	28724	27890	118866	270280	242341	14880	23711	739576		
	Բ.	-	1137	1502	2670	8446	3872	195	460			
1929-30	Բուրգը	452	29861	28892	116536	278676	246213	15075	24171			
	Պ.	578	28258	28983	119637	260170	251968	12753	21888	720538		
15	ասրբեկան	-	827	1248	2800	7818	3645	148	350			
15	բարձր	-	-	1017	-	-	-	-	-	1080		
		1526	109615	104824	484773	1012190	926710	55555	39859	2734552		

ամիսացնք սայլերն ու ոեկտիսն ֆուրդոններն իրենց ծանրությամբ ու անհարմարությամբ կրկնակի ավելացնում են նրա քաշը։ Դրա վրա ավելացրեք այն, վորժողովությը յերբեք կրկնանու վզի ու մեջքի չափով չեմ վերցնում նրա խամուտը, լուծը և փալանը, այլ ինչպես պատահում ե, սրա հետ միասնակի այդ մասերի հին և մաշված լինելը, վորժ մեխերն ու ծղոտները դուրս յեկած են ինում և առաջացնում են ահազին քանակությամբ վերքեր։

Սրանը բարեփոխության կարոտ խնդիրներ են և Առշրջային կառավարությունը կոռպերատիվ ու նըման պետական հիմնարկների համար արդեն մշակել է հետեւյալ ծրագրիը։

ա) Փալանը փոխվելու յե ֆրանսիական թամրի։  
բ) Պատվողները վերածվելու յևն։ 1) Հարթավայրերում տավրիկակային և մալականի տիպի ֆուրդոնի։  
2) Լեռնային տեղերում ոսական յերկանեվավոր կառքի (սայլակի), վորը պետք է ունենա յերկաթե սոնակ։  
3) Բացի այս, ուստական յերկանիվավոր կառքը փոխվելու յե 1890 թվի ձևի։

գ) Մալականների ֆուրդոնները թեթևացնելով կարելի յե գործածել յեղներ լծնլու համար։

ի Հարկե, այս ոեֆորմները վերջնական չեն, մասնավոր յեղների համար, վորոնց լծասարքերը փոխելու յե, ինչպես Շվեյցարիայումն ե, փոքրից և լինելու, հարցրած նրանց ամբողջ կրծքին։

Այս բարեփախության վրա պետք է ավելացնել ընկերության արած կարդադրությունը՝ միալուծ (միաժիանի) կառքերի ու տաչկանների կամարի գործածությունը։

Մանորուրյուն։— Յեթե կամարի գործածությունը մինչեւ այժմ չե ներմուծվում՝ պատ-

ճառը պատճառատի կամարները չլինելու և, գորի համար ընկերությունն պայմանավորվել է Հայոնարկութիւնի հետ, առաջարկելով նրան չլինել և տարածել 1000 հատ կամար։

Այս բոլորի վրա յեթե ավելացնենք և այն բարեփոխությունը, վորը ընկերությունն մտածել և անելու նշերի բեռնակրության համար, այն է՝ փալանը՝ փոխարինելու չորս անիվավոր սայլերով, վորոնցով և նաև ի պիտակի կիմնի փոխանակ մեջքով 4—5 փութ տանելու, ուսով տանել 8—10 փութ։

Այս, ի հարկե, կարելի կիմնի անել այն տեղերում, վորտեղ կան կանոնավոր ճանապարհներ, իսկ լեռնային տեղերում, վորտեղ սայլ չի բանի, պետք և պահպանել փալանի գործածությունը։

Այդ նույն բանը կարելի յե անել ուղանքի վերաբերմար, ինչպես այս ըսողեցիս արվում և նույսաստանի այն մասերում, վորտեղ ուղանքը կան։

Ով ման է յեկել Հայաստանի գավառները, կամ հենց այստեղ, Յերևանում ուղադրությամբ հետեւյել է կյանքին, նա տեսած կիմնի թե որական քանի կազ յեզ կյանքին, նա տեսած կիմնի թե որական քանի կազ յեզ ու կոմիչ, ձի ու ջորի անց են կինում փողոցով ընուատակ։ Հարցնում թուինչիք յե անասունդ կազում, պատախանում են ։—«Ճըսի յե»։—Նշանակում ե պայտանականում են ։—«Ճըսի յե»։—Նշանակում ե պայտանականի կճղակի կամ ամբակի յեղջյուրային մասի միջով խփելու, խփել և մասի միջով, վորախով կենդանին միջրավորվել ե և չի կարողանում ման գալ։ Շատ մանին միջրավորվել է և չի կարողանում ման գալ։ Շատ մանկամ ել (յեղել են դեսղեր) կենդանին վարակվել է, ոստակել։ Յեթե սրան ավելացնենք այն շարաչար տանձանքը, վոր տալիս են կենդանուն (յեղան կամ գոմեցին) նրան գետին տապալելով, կապկապած պայտում, յերբ անասունը ցավից ու կակծից ցնցումներ և անում, և նրա յերեսին հարվածում են մուրճի սուր ծայրով։

տանջանքի պատկերը կատարյալ կլինի : կենդանին յերբ պառկած տեղից վեր և կենում, նա չշմածի պես և լինում, գրեթե ուշաթափ :

Պայտաները, վորոնք ունեն արհեստանոց, վոչ մետեղ դազգյաւ չեն պահում, վորակեսզի կենդանուն թուկերով վեր բարձրացնեն, նրա վոտները գետնից կըտրեն, հեշտությամբ պայտեն, վոր կենդանուն ցավ չպատճառեն : Իսկ ձիերին, առանց դազգյահի կանդնած տեղում պայտելը ամենահարմարն է ճանաչված, և այդ կարող և անել ձիու հոգերանությունը հասկացող հըմուտ պայտառը :

Այս ամենը դեռ վոչինչ, յեթե նրանց պայտերն ու մեխերը համապատասխան լինելին կենդանիների վոտքերին : Հաճախ պատահում ե, վոր պայտը վոտքին փոքր և լինում կամ մեծ . ձիու պայտի մեխերը խփում են յեղան վոտներին, վորի պատճառով յեղան կճղակը ճաքճում ե, և յեղը վոտքը հարթ չի կարողանում դետին դնել, վորովհետեւ կճղակի դրսի մասը ներսի մասից բարձր և լինում, ցավեցնում . սրանից դուրս հաճախ դուրս մնացած մեխերի մի քանիսի ծայրերը կոտրվում են և հնարավորություն չեն տալիս կենդանուն պատ ման դալու :

Մահոքուքյուն .— Հայաստանի կառավարությունը հանձնարարել է Հայտնարկողին բաց անելու որինակելի դարբնոց, վորակավոր պայտառներ պատրաստելու համար, ու այդպիսիներին իրավունք տալու, վորպես վորոշ կուրս անցկացած վարպետների, պայտառությամբ դրազվելու : Այդ դարբնոցը չուտով բոլորովին պատրաստ կլինի :

Պայտելու նման ել կատարվում ե վորձատելու (кастрация) գործը :

Յիս գործողությունը, արու կենդանիների ձվերը հանելը կամ պարկում նզմել-վոչնչացնելը կատարվում ե ամենաանմաքուր ձեռքերով և անողորժ կերպով :

Հանում են գոմեշի ձվերը . նրան պարաններով կապկապում, պառկեցնում են գետնին, կտրում են պարկի ծայրը, սկսում դուրս քաշել ձվերը, մինչեւ վորհաղողդակից լարը կհասնի և այն կկտրեն և ապա պարկի բերանը կկապեն թելով ու կթողնեն աղատ . . . Եռանց դեղի ու ախտահանության . . . Իսկ արջառների ձվանները նզմում-ջարդում են ձեռքով, կամ յերկու փայտի մեջ ամրացրած, յերրորդ կողմիցն ել ծնկով հուակ են տալիս, մինչեւ վոր ձուն ջախջախում ե . Դըրանից հետո կենդանուն թողնում են գոմի մեջ կապած մեկ շաբաթից մինչեւ մեկ ամիս . պարկը ուռչում ե, անսունը տաքություն ե ունենում, ջերմում և հազիվ կազդուրվում :

Պատահել են դեպքեր, վոր այդպիսի բարբարոս վերաբերմունքից — վորձատելուց — անասունը ստուկել ե :

Մինչեւ այժմ մեր բերած բոլոր բացասական կողմերը միայն մի բան են ապացուցում, վոր մեր աշխատավոր ժողովուրդը կենդանիների, նրանց կյանքի ու կենցաղի, նրանց հոգերանության ու անատոմիայի մասին շատ քիչ հասկացողություն ունի . յեթե նա այդ իմանար, նա իր ձեռքի տակ յեղած, իր աշխատընկեր կենդանիների հետ այլպիս կոշտ ու կոպիտ, անփույթ կենդանիների համար կենդանու մարմնի ու անխնամ չեր վարվի : Նրա համար կենդանու մարմնի մաքրությունը, լույսը, ոդը, արելը, հիվանդությունների գեմ անմիջական միջոցներ ձեռք առնելը, հիվանդ, կույր, կաղ, վիրավոր անասուններին այդ զբության մեջ չաշխատացնելը, բավարար սնունդ տալը, ժամանակին ըրելը, չափից ավելի բեռնելը, ծեծելը և այլն,

և այլն կինեյին նրա մտածմունքի ու խնամքի տռարկան։ Բայց այդ այդպիս չե։ այլ կերպ և նրա մտածողության յեղանակը, կամ ճիշտն ասած, հասկացրդությունը։ «Են ի՞նչ ե, վոր յես նրան լողացնեմ։ ամոթչե։ կամ նրա վիրավոր մեջքին փալան չդնեմ . . . եշ ե . . . հավն ի՞նչ ե, վոր յես նրան վոտքերից բռնած չտանեմ ծախելու։ ի՞նչ նշանակություն ունի. են ե՝ մորթելու յին . . .» Սրանք այնպիսի դարձվածքներ են, վոր միայն անկուլտուրական մարդուն են հատուկ։

Մեր գյուղացին հեռու չի տեսնում. նա չի մտածում, վոր զրանով քայքայում ե իր տնտեսությունը. այսորված ստացած ավելորդ մեկ ոռոքին, նա վաղվա 10 ոռոքի վնասից բարձր ե դասում. նա չի ուզում գիտենալ, վոր վիրավոր ենք կարող ե վարակվել, ասենք պրկախութ (СТОЛБНЯԿ) հիվանդությամբ, կարող ե ստակել. չի ուզում ըմբռնել, վոր գլխիվայր ասրած (վոտքերից բռնած) 10 հավից 1-2-ը ճանապարհին ստակում են ի վնաս իրեն. չի ուզում գիտակցել, վոր յեզր, ձին, ջորին, եշը, ուզում, գոմեշը շատ ծանր աշխատանք կատարելուց, ժամանակից առաջ են զրէվում կյանքից և շատ անդամ ել հաշմանդամ են դառնում, ստակում . . . Ու ինքը վաղը, ավելի ստացած դրամի տասնամբառներ պետք ե վճարե, վոր նոր անասուն դին։

Ահա այն յելակեալը, վոր ունի «կենդանիներին Պաշտպանող Ընկերությունը», այսինքն՝ տնտեսականի ավելման առաջն առնելը։

Մեր աշխատավոր գյուղացիությունը, կարծես, այն տեսակ հասկացողություն ունի կենդանիների մասին, վոր նրանք այնքան ցավ չեն զգում ծեծից ու հարվածից, այնքան չեն տանջվում ծանր բեռից, վորքան իրենք մարդիկ. նա չի ըմբռնում, վոր այն կոչտ փայտի կտորը— լուծը, վոր գնում են յեղան կամ գոմեշի վր-

պին, ավելի շատ ձնչում և ցավ ե պատճառում, քան ծանրությունը. չի հասկանում, վոր շողը, ցուրտը, ճանապարհների անհարթությունը և ցեխը նրա համար նույնքան դդալի յեն, վորքան իրեն տիրոջ համար, վոր անասունը քաղցած ու ծարավ ժամանակ նույնական ուժապառ ե լինում, լինչպես ինքը՝ մարդը։ Իսկ գալով ժամանակությունը ունի կերպով ըմբռնե կենդանու այն բանին, վոր նա նրբին կերպով ըմբռնե կենդանու չողերանությունը կամ հասկանա նրա լեզուն՝ այդ բանը նա չե ուսումնասիրել։

Կենդանիները յերբ ձայներ են արձակում՝ իրարմիտքը հասկանում են, ըմբռնում են, մինչև անդամ գիտակցում են տիրոջ գեպի իրենց ուղղած բառերն ու բացականչությունները, թե նրանցով տերն ի՞նչ ե ուղղում առել, մինչդեռ տերը՝ ընդհակառակը չի ըմբռում, չի հասկանում կենդանու տված նշանները, բռնում, չի հասկանում կենդանու տիրին ու ունրա հանած ձայնարկությունները, նրա տիրին ու ունրա հանած ձայնարկությունները, յերանց զարմանալի յե, մինչև իսկ ծիծաղելի նում, դա նրան զարմանալի յե, մինչև իսկ ծիծաղելի ասացի, յե թվում։ Մեկ անգամ, յերբ մեկ միլիցիոների ասացի, յե թվում։ Մեկ անգամ, յերբ մեկ միլիցիոների ասացի, վոր թույլ չտա կառապանին քրտնած ձին ցրտին այդքը վոր թույլ չտա կառապանին քրտնած ձին ցրտին այդքը մերը— այդ այնքան գիտե, վորքան տեսել ե իր մորթած անասունների ներքին մասերը, մասամբ ել վուկրները. նա հասկացողություն չունի կենդանու վուկրները. նա հասկացողություն չունի կենդանու թոքերի, յերիկամունքների, արնատար յերակարտի, թոքերի, յերիկամունքների, արնատար յերակարտի ների, միզային փամփուշտի, ստամոքսի, աղիիների ների, միզային փամփուշտի, ստամոքսի, աղիիների թյունեյությունների ու նրանց կատարած ծառայությունների մասին, այդ կողմից նա այնքան հետ ե

թյունների մասին. այդ կողմից նա այնքան հետ ե

մնացել, վոր հիշեցնում և կսենոֆոնի ժամանակները : (Մեր խոսքը, իւրաքի, դպրոցներում սովորած, վորոյ չափով զարգացում ձեռք բերած անհատների մասին չե) :

Կան կենդանիներ, վորոնք իրենց առանձնահատկություններով աչքի յեն ընկում : Հիշենք ուրանցից մի քանիսը. 1) հովվական չները, 2) խողարկու չները, 3) Սան-Բեռնար չները, 4) կովերը, 5) ձիերը, 6) գոմեշները, 7) կատուները, 8) թթի ղերը, 9) արարիւները, 10) կոռոնկները, 11) աղավնիները և այլն, և այլն, վորոնց կատարած դեպքերի նկարագրությունը մենք կտանք առանձին դրվույկով :

Այդ բոլորի, մի բառով ասած՝ տղիսության պատճառով ել նա—ժողովուրդը—այդպես վարչում և իր անասունների հետ, ինչպես վարչում են անշունչ առարկանների հետ :

Սա տղիսության, յետամացության հետեվանք և, վոր մեր ժողովրդի մեջ անցել և սերունդե-սերունդ և հասել և մեղ գրա չնորհիլ և, վոր այսոր մեր մանուկ սերունդը վոչ մի սիրալիր վերաբերմունք չի ցույց տալիս դեպի անասունները : Այդ յերեվույթի դեմ մենք պետք և կովենք մեր բոլոր ուժերուի :

Վոր կենդանիները մեր դործ-ընկերներն են՝ կատակած չկա, վոր առանց կենդանիների մենք դժվարությամբ կարող կլինելինք ապրել՝ կասկածից դուրս և : Ո՞վ պետք և աներ մեր վար ու ցանքը, ո՞վ պետք և կրեր մեր հացն ու խոտը, մեր քարն ու փայտը, ո՞վ պետք և մեղ տար կաթ, միս, կաշի, մորթի, բուրդ, ձու, փետուր և այլն . այդ բոլոր մենք վորտեղից պետք և ձեռք բերելինք, վոր հագնվելինք ու կերակրվելինք : Ճիշտ և, այժմ վար ու ցանքը մասամբ ել փոխադրությունը (վորտեղ ճանապարհները հարթ են) կարող ենք

կատարել մեխանիզմացիայով, բայց յերկրի խուլ անկյուններում, սարերում, ծորերում, խիտ անտառների մեջ, քարքարոտ տեղերում, վորտեղ տրակտորն ու ավտոն չեն կարող մուտք գործել, մեղ ոդնության համարդը ելի անստուններն են : Իսկ անունդը, այդ ամենաեյական պարենն արդեն մենք վոչ մի կերպ, վոչ մի մեխանիզմացիայի միջոցով չելիք կարող ձեռք բերել :

Արդ, յերբ այդ այլպես և, յերբ նրանք մեր աշխատընկերներն են և մննդառում՝ մենք պետք և (և անհրաժեշտ և) իմանանք մեր անելիքը, մեր վերաբերմունքը նրանց հանդեպ :

Յեվ ահա այդ թերություններն ու անելիքներն են պատճառը, վոր մի խումբ ընկերներ 1928 թվին մտապատճառը, վոր մի խումբ ընկերություն, անվանելով այն «Հծեցին կազմել մի ընկերություն», անվանելով այն «Հ. Ս. Խ. Հ. Կենդանիներին Պաշտպանող Ընկերություն», կամ կրօնաց՝ «Կենդանապաշտպան ընկե» :

Բայց նախքան այդ նյութին, այն ե՛ ընկերության և նրա անելիքներին անցնելը՝ մի համառոտ ակնարկ և նրա անելիքներին անցնելը՝ մի համառոտ ակնարկ պատճության վրա, և տեսնենք թե նման ընկեցները պատճուններ յեղել են, և յեթե յեղել են՝ յե՞ր, վորտե՞ղ ու, և ի՞նչ են արել նրանք :

Կենդանիներին պաշտպանող ընկերությունն առաջին ագամ կյանքում պաշտոնապես հանդես և յեկել ջին ագամ կյանքում պաշտոնապես հանդես և յեկել Անդլիայում, Լոնդոն քաղաքում, 1824 թվին և ատզա Անդլիայում, Դեկտեմբերի 7 օտարտղարդ քաղաքում, վոր 1837 թվին Գերմանիայի Շտուտգարդ քաղաքում, վոր 1847 թվին Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքում 1905 թվին իր ցանցը հասկարդանալով քաղաքներում 1905 թվին իր ցանցը հասկարդանալով քաղաքներում 200. այդ ընկերությանը անդամագրված ցինը և մինչև 200. այդ ընկերությանը անդամագրված ցինը և մինում 75.000 մարդ, տարեկան 100.000 հազար մարդ յեկամուսով և 1.000.000 մարդ դրամակլինով : Կենդանիներին պաշտպանող ընկերությունները, ծառակամանը մարդկան պաշտություններում 1896 թվին Բուրգալիցելով զանազան պետություններում

պատմակում սւանդում են իրենց անշրջանիկ համագույն առը, իսկ 1900 թ. Փարիզում 2-րդ համագումարը, Հոյստեղ, համարյա, բոր յելքողական պետություններին ունեցել են իրենց ներկայացուցիչները: Ռուսաստանում կենդանիների պաշտպանող ընկերությունն առաջին անգամ հիմնվել է 1865 թվին Լենինգրադում (Խալկին Պետերբուրգ), վորի նպատակն է յեղել՝ 1) բարելազբել կենդանիների կենցաղը, 2) հիմնել կառարելագործված սպանդանոցներ և գտնել կենդանիներին մորթելու ավելի հարմար յեղանակներ, 3) հիմնել ձիու սպանդանոց և անասնաբուժարաններ, 4) դեպի անասունները լավ վերաբերմունք ցույց տալու համար հիմնել պարզաբանվություններ և 5) հայտարարել՝ դեպի անասունները դաժան վերաբերվելու դեպքերը:

Ինչպես տեսանք, Լենինգրադի կենդանիների Պաշտպանող ըկերության նպատակը գլխավորապես ուղղված է յեղել դեպի անասունները տեղի ունեցող դաժան ու անսիրու դեպքերի դեմ: Այդ ուղղությամբ ել (համաձայն կենդ. Պաշտ. Ընկ. միջնորդության) արդարադատության մինիստրը քրեական որենսդրքի կողեկանում մտցնում է մեկ կետ, վոր ընդառաջ դնան ընկերության նպատակներին:

Այսպիսով, 1871 թվի հաշտարար դատավորների պատճեղքի 43-րդ հոդ. լրացվում է հետեւյալ կետով. «Ընտանի կենդանիներին անտեղի տանջանք պատճառողը, իբրև հանցավոր յենթարկվում է մինչև 10 տուրլու առողջանքի»: 1895 թվի Լենինգրադի ընկերության անդամների թիվը հասնում է մինչև 1000-ի. 1897 թվից Լենինգրադը բաժանվում է 29 քաղաքամասի, վորոնցից յուրաքանչյուրում նշանակված են լինում մեկնեկ հղարարներ: Վերջիններս վոստիկանության հետ

ժիասին հսկում են քաղաքը և դեղի անառունները ցուցադրված անսիրու և զաժան վերաբերմունքն արձանագրում և ուղարկում են դատարան:

1891-1895 թիվը լենինգրադի ընկերությունը (իրավունք ստանալով) բռնում, վոչնշացնում և 8255 թափառական չուն, աղատ և թողնում 3519 չուն, առավելապես ցեղական չներ:

Այդ ըկերության նախահաշխվը 1895 թվին յեղել է 8.000 ռուբլի:

Բացի Լենինգրադից, Ռուսաստանում այդ տեսակ ընկերություններ չիմնվում են Ողեսայում, Թիֆլիսկերություններում, Մուկովայում, վորոնք դոյություններում միմյանցից անկախ, առանձին-առանձին:

Թիֆլիսում ընկերությունը 1882-83 թվին, վորոնք ըրեալովում խմբագրությամբ հրատարակում և ամսաթերթ: Լենինգրադի ընկերությունը նույնական 1873 թվին հրատարակում է մի այդպիսի ամսաթերթ, սարթվայի յերկար դոյություն չի ունենում և յերկու համար լույս տեսնելուց հետո փակվում է:

Այժմ յեփրոպական բոլոր յերկրներում այդ տեսակ ընկերություններ կան:

«Հայաստանի կենացուներին Պաշտպանող Ընկերությունը» հիմնվել է 1928 թվին և հաստատվել է նույն թյունը: Հիմնվել է 1928 թվին և հաստատվել է նույն թյունը: Հիմնվել է 1928 թվին և հաստատվել է նույն թյունը: Հիմնվել է 1928 թվին և հաստատվել է նույն թյունը:

Ընկերությունն իրավաբանական անձ է. նա ունի իրավունք պարտադիր վորոշումները խախտողների վրա արձանագրություն կաղմելու, վորևե վկայի ներկայությամբ, և նիրկայացնելու ամ, բայց պարագանելու համար:

հանցավորին պատասխանառության կանչելու, մինչև  
անդամ՝ քրեական դատի յենթարկելու:

Ընկերությունն իրավունք ունի կազմակերպելու  
յերեկությունը, ցերեկությունը, դասախոսություններ,  
գեկուցումներ զրուանքներ, ներկայացումներ, հա-  
մերգներ. ունի իրավունք կազմակերպելու աշակերտա-  
կան և պատանեկական խմբակներ Հայաստանի բոլոր  
վայրերում, վորտեղ հարմար և պետք է համարե բաց  
անելու իր բաժանմունքները և նշանակելու իր գործա-  
կալները, կապել յերկիրը կենտրոնի հետ, կոնտակտ  
գործներու նպատակնով: Ընկերությունն իրավունք ունի  
արդյունաբերական գործերով զրադվելու, վորպիսի  
գործերը սերտ կապ ունին նրա նպատակների իրագործ-  
ման հետ:

Ընկերությունը կազմակերպվել ե հասարակական  
ընույթով ու սկզբունքով այն պատճառով, վոր նախ  
գործը ժողովրդականանա, տարածվի մասսաների մեջ  
և դառնա նրա հսկողության առարկա, մանավանդ վոր  
նա անմիջականորեն կապված ե նրա տնտեսականի հետ.  
2) Ժողովուրդը սովորի, ուսումնասիրե կենդանիների  
կյանքն ու կենցաղը, նրա անառոմիան և հեղերանու-  
թյունը, վորից նա այսոր շատ քիչ հասկացողություն  
ունի. 3) աշխատող ձեռքերի թիվը շատ լինի:

Ինչպես ասացինք, սույն ընկերության կազմակեր-  
պելու գլխավոր դրդապատճառն յեղել են այն թերու-  
թյունները, վոր նրանց գեմ կոփվ մզե և այն մի շարք  
բացերը, վորոնք ծառացած են մեր առջև՝ ծածկե այն:

Այդ թերությունների մասին մենք արդեն խոսե-  
ցինք, իսկ բացերն են. —

1) Ռեֆորմ լծառարքի և կառասարքի մեջ. 2) ու-  
փորմ անասունները պայտելու և վործառելու գործում.

32

3) պլոֆիլակտիկա, այսինքն՝ կանխել ամեն տեսակ հի-  
վանդություններ և դժբախտ դեպքեր, կամ որ-առաջ  
նրանց առաջն առնել: 4) Աշխատել ավելացնելու հիվան-  
դանոցների ու ամբուլատորիաների, ինչպես և բժշկնե-  
րի թիվը. 5) ստեղծել այդ ուղղությամբ գրականու-  
թյուն, վորպիսի տարաբախտաբար մենք չունենք կամ  
շատ քիչ ունենք. 6) մանուկ սերնդի մեջ տարածենք  
սեր և գիտակցություն դեպի այդ գործը և կազմակեր-  
պենք նրանցից խմբակներ (բրիդաղաներ), ուժեղացնենք  
այդ հսկիչ բրիդաղաները, ինչպես այժմ այդ կա Ամերի-  
կայում: 7) Եթե կարիք լինի, (և կլինի) զբաղվենք  
առեւրա-արդյունաբերական գործերով, ինչպես սեփա-  
կան ամբուլատորիա, պայտառանոց, լծասարքի և կա-  
ռասարքի արհեստանոց և այլն: Այդպիսի ծրագրի հիմքն  
ու նպատակը լինելու յի յերեք բան. —

1. Ազնվացնել անասունների ցեղը, այն ցեղը, վոր  
այսոր միանդամայն կորցրել ե իր նախնական տիպա-  
րը, ճղճիմադել, փոքրացել, դարձել մի տեսակ կա-  
տու: Այդ անելու համար բավական չե աղնվացեղ բու-  
զաներ, հովատակներ, խոյեր ու աքաղաղներ բերել  
տալը, այլ և զբա հետ հարկավոր ե բերել— բազմաց-  
նել մեր մեջ ցեղական կովեր, զամբիկներ, վոչխար-  
ներ, հավեր և այլն: Ժողովրդին հարկավոր ե որի-  
նակ վիրանել Հայաստանի կառավարության ձեռքով  
հիմնած միքանի ֆերմաններից և հետեւիլ նրանց. և  
այսպիսով 5-10 տարում իր անասունների գրությունը  
հասցնել այն աստիճանի, վոր նրանք ավելի ուժեղ,  
խոչըր, լավ վորակի և արդյունավետ լինին:

2. Սակայն դրանով չպիտի բավականանա Հայա-  
տանի աշխատավոր ժողովուրդը, այլ նա պետք ե ի-  
տանի աշխատավոր ժողովուրդը, այլ նա պետք ե ի-

33

զահակը. նախ հարկավոր ե, վոր նա շինի որինակելի  
դոմեր մեծ լուսամուտներով ու քարեն, կամ տախտա-  
կե հարթ հատակներով, վորտեղ ողն ու լույսը և  
արելի ճառագայթները ներս թափեցին կենդանու մար-  
մնի ու հոգու մեջ. յնըկորոդ մաքուր պահեն նրանց  
տակը, վորոշ ժամանակներ, վորքան կպահանջվի այդ,  
լողացնեն կենդանիներին, մաքրեն նրանց մարմիննե-  
րը, կերն ու ջուրը տան պահանջի համեմատ, վոր-  
պեսդի այդ տված կերի ու ջրի համեմատ նրանցից  
ստացվի արդյունք:

3. Իսկ ամենից գլխավորը՝ կենդանիներին իրենց  
ուժերից բարձր չշահագործելու և, չբնոնելը, քրա հետե-  
վանքով (յերբ բնոր չի կարողանում քաշել) չծեծելը,  
չուաչելը:

Մենք արդեն տեսանք, թե ինչ տիպուր հետեանքի  
յե հասցնում ծանր բեռը, ծեծելն ու տանշելը. բավա-  
կան ե հիշել այն 32.000 դլուխ խոշոր անասունների  
կոտորածը յերեք տարում, վոր գլխավորապես առաջ և  
յեկել գժրախտ պատահարներից: Հազար վերքերից ու  
անբացարելի հիվանդություններից առաջ յեկած մա-  
հացությունները... Այս բոլորը այնպիսի խոշոր կո-  
րուստներ են, վոր վոչ մի բեռնակրություն ու կաթ-  
նատնեսություն չի կարող փոխարինել հատունացել:

Յեթէ մենք ազնվացնենք նրանց ցեղը, յեթէ իմա-  
նանք նրանց ինսամելը և չափավոր կերպով ոգտագոր-  
ծելը՝ մենք կստանանք կրկնակի ավելի արդյունք,  
քան ստանում ենք այժմ:

Իսկ յերբ մեր յերկիրը, յեթէ վոչ ամբող-  
ջապես, գոնե նրա մեծաղույն մասը կմշակենք մե-  
քնաներով, նույնպես և փոփառությունը կկատա-  
րենք մեքենաներով, և այնքան կարիք չենք ունենա-  
լիկան-դրաստ կենդանիների, այն ժամանակ մենք  
այդ կենդանիներին կառեցնենք, կողըդրացնենք ու իր-

ողարարտացնենք մաի մթերման համար, վարսով մեր  
իերկորի արտադրության մեջ ճյուղը կավելանա:

Ահա այն իսկական կովանները, վործնց պր-  
պետք ե կանգնի մեր աշխատավորությունը:

Այդ նպատակներին համեմու համար մենք ունենք  
յերեք միջոց.

1. Վարչական միջոցը. մեր անդամների ու միլի-  
տիայի հսկողությամբ թույլ չտալ սնիմացականու-  
թյան, կամ ադահության պատճառով անառուններին  
տանչելու, ծեծելու, չափից ավելի բեռն տալու, վաս-  
պահելու, լրիվ սնունդ չտալու. արդակով վարվողնե-  
րին կանչել պատասխանատվության և հետ կասեցնել  
նման վնասարար արարքներից:

2. Գլորցները, ուստանալ սերունդը. համաձայն  
կանոնադրության § 10-ի կուզմել խմբակներ (բրիգա-  
դաներ), նրանց մեջ տարածել գիտակցություն ու  
գրականություն այդ մասին, նրանց միջոցավ անդուռ  
կորիվ մղել անհամկացող և վնասարար տարրերի գեճ,  
վորոնք կասամ և մեր տնտեսությունը պրապահան-  
գա մղել ժողովրդի մեջ, կուզմել գասախոսություն-  
ներ, զրույցներ, ընթերցանություններ, դարձնել նը-  
րանց ընկերության վոչ միայն անդամը, այլ և մոտիկ  
բարեկամը և այսպիսով համել այն նպատակին, վոր  
ունի ծրագրած ընկերությունը:

3. Կոլտնեսուր յունեները. այն ժամանակ, յերբ  
ամբողջ մեր յերկիրը վերածնում է կոլտնեսության,  
ու խորտնեսության, համայնացվում են յուրաքան-  
չչուր մի իր, մի անառուն, մի կոտր հող, մի բույս  
սեփականություն և դառնում ընդհանուր համայնքի և,  
հետեւապես, կոլտնեսեառության-խորհոնտեսության յու-  
րաքանչյուր մի անդամ իրավունք ու ունենում, յեթէ  
չառնենք պարտարանություն, հետևյուն հսկելու. Հա-

սարակության բարիքին—անշուշտ այնտեղ կհետեւին  
կենդանիների ցեղի ազնվացման, նրանց սննդի կանու-  
նավոր մատակարարման ու նորմալ ռդտագործման:  
Յեթե կոլտնտեսության վարչությունը, կամ նույնիսկ  
յուրաքանչյուր մեկ անհատը նկատե, վոր անասունը  
հիվանդ է, կաղ է, վերք ունի, կամ կույր է՝ թույլ չի  
տա այդ անասունին աշխատեցնելու, մինչև վոր նա  
չըժշկվի: Նա (կոլտնտեսությունը) իր տրամադրու-  
թյան տակ յեղած առողջ անասուններից կարող ե  
պետք յեղած աշխատանքը կատարել, մանավանդ, վոր  
այդ կոլտնտեսությունները կունենան իրենց անասոնա-  
բույժերն ու ադրոնոմները, վորոնք ակընդետ կհետե-  
վեն ամենին, բացի դրանից, յուրաքանչյուր կոլտնտե-  
սության մեջ ընկերությունն կաշխատի ունենալ իր  
անդամներկայացուցիչը, գուցե և բաժանմունքը:

Այս այն եյական յերեք ճանապարհը, վորով աշ-  
խատելու յենք մենք. իսկ դրանց աշխատավորների մեծ  
մասը տալու յեն մեղ մեր դպրոցները, մանավանդ  
ԼԿՅԵՄ-ն ու պիոներները, վորոնք մեր յերկրի  
գլխավոր յերակներն են, և վորոնք մեծանում  
զարգանում են մեր ապագա հասարակական գործիչնե-  
րը լինելու, հետեւելու կյանքին ու նրա զարգացման  
ուղիղ ընթացքին: Ամեն տեղ, ուր վոր հարկավոր ե՝  
նրանք կրարձրացնեն իրենց ձայնը և ցույց կտան իրենց  
միջամտությունը: Նրանց մեջ ևս, ինչպես դպրոցնե-  
րում, կինքիջներսամ, կազմվելու յեն յեռյակներ և  
կազմակերպելու յեն կաղըբեր և թույլ չեն տալու, վոր  
մեր յերկրում կենդանիները դուր տեղը զոհվեն, այլ  
ընդհակառակը՝ աշխատելու յեն պահպանել այն,  
զարգացնելու ու ազնվացնելու նրա ցեղը: Ինչպես  
դպրոցների, այնպես եւ ԼԿՅԵՄ ու պիոներների վրա  
մեր հույսը մեծ եւ:



21.386